ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԸ

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Նոր Նախիջևանի հայկական գաղութը, որը հիմնականում կազմված էր 1779թ. Եկատերինա II կայսրուհու նախաձեռնությամբ վերաբնակեցված ղրիմահայությունից, 19-րդ դարի կեսերին տնտեսական և հասարակական լիաթոք կյանքով էր ապրում: Հայ համայնքն ուներ կրթված ու առաջադեմ մտավորականություն, Նոր Նախիջևանը դարձել էր ազգային կյանքով ապրող հայկական կարևոր կենտրոն՝ Ռուսաստանի հարավում: Դոնի հայության կենսական նշանակություն ունեցող հարցերից էր հայ ժողովրդի արևմտահայ հատվածը թուրքական լծից ազատագրելու խնդիրը:

Ընդհանրապես՝ 19-րդ դարի կեսերից սկսած հայ ժողովրդի արևմտյան հատվածի դժվարին կացությունն իր վրա էր գամում հայ հասարակական ու ազատագրական միտքը: Նոր Նախիջևանում ևս հետևում էին Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում կատարվող իրադարձություններին և ամեն կերպ ջանում նպաստել հարազատ ժողովրդի ազատագրման գործին: 1870-80-ական թվականներին արևմտահայության ազատագրման մեծ ջատագով Ռաֆայել Պատկանյանն ուշիուշով հետևում էր կատարվող անցքերին, մասնավորապես՝ ռուս-թուրքական պատերազմի հետևանքով ստեղծված իրադարձություններին, դրա մեջ տեսնելով հայրենակիցների ազատագրման իրական ուղին: Պայքարի կոչող հայրենասիրական շնչով գրված նրա գործերը լայն արձագանք էին գտնում հայկական շրջաններում, հատկապես երիտասարդության մեջ:

Նոր Նախիջևանի հասարակական կյանքի մթնոլորտը պարարտ հող էր՝ Ռ. Պատկանյանի գաղափարների տարածման համար: Նորնախիջևանցիները, ինչպես և այլ ռուսահայ համայնքները, ռուսական զենքի հաղթանակի մեջ էին տեսնում արևմտահայության ազատագրության երաշխիքը և, ըստ այդմ, ջանում էին իրենց բաժինն ունենալ հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակի մեջ: Դրա արտահայտություններից մեկն էր ահա՝ 1877-78թթ., պատերազմի հենց սկզբում, վիրավորներին խնամելու, նրանց օգտին կատարվող նվիրատվությունների գործը գլխավորելու համար Նոր Նախիջևանում ստեղծված հատուկ հանձնաժողովի գործունեությունը:

Ինչպես հայտնի է՝ Թուրքիայում 1894-96թթ. հայկական ջարդերի (որոնք կարելի է համարել Հայոց ցեղասպանության սկիզբը) հետևանքով արևմտահայերի համար ծանրագույն իրավիճակ էր ստեղծվել: Այդ առիթով՝ ռուսահայ համայնքներից օգնություն ստանալու ակնկալությամբ, Կոստանդնուպոլսի պատրիարք Մ. Օրմանյանը կոչով դիմում է Ս. Շահազիզին: Մոսկվայի, Պետերբուրգի, Նոր Նախիջևանի և այլ հայկական համայնքներն անմիջապես արձագանքում են այդ կոչին: Ստացված միջոցներով որբանոցներ և դպրոցներ են բացվում: Դոնի հայությունը 45 հազար ռուբլի նվիրատվություն է կատարում,[1] իսկ գաղութի նշանավոր մտավորականն և հասարակական գործիչ Մ. Բերբերյանն իր միջոցներով բացում է որբանոց:

20-րդ դարի սկզբներին Նոր Նախիջևանում հրատարակվող «Նոր կյանք», «Մեր ձայնը» և մյուս թերթերը պարբերաբար անդրադառնում էին արևմտահայության ծանր վիճակին և շեշտում այնտեղ բարեգործություններ կատարելու անհրաժեշտությունը: Մասնավորապես «Մեր ձայնը» լրագիրը 1908թ. բազմիցս անդրադառնում է երիտթուրքերի հեղաշրջմանը և արևմտահայությանը նրանց խոստացած բարեգործությունների խնդրին: «Թուրքական սահմանադրությունը հայկական կյանքում» հոդվածաշարում և այլ նյութերում թուրքերի վարած քաղաքականության և ժողովրդի կյանքից վերցված փաստերի վերլուծության հիման վրա թերթը ցույց է տալիս, որ սպասելիքներ չպետք է ունենալ Թուրքիայում կատարվող հեղաշրջումից:

Առաջին համաշխարհային պատերազմը հայկական շրջաններում, այդ թվում և գաղթօջախներում, գրեթե ամենուրեք Արևմտյան Հայաստանը ազատագրելու հույսերի մեծ ալիք բարձրացրեց: Ոգևորությունը մեծ էր նաև Դոնի հայության շրջանում: Կազմակերպվում են միտինգներ Նոր Նախիջևանում, Մուրբ Խաչ վանքում և այլուր: Այստեղ, ինչպես և այլ ռուսահայ համայնքներում, կառավարության թույլատվությամբ, ստեղծվում են հայկական կոմիտեներ: Նորնախիջևանյան կոմիտեի կազմում էին հայտնի գործիչներ՝ Գր. Չալխուշյանը, Գ. Չուբարյանը, Է. Շահազիզը, Ռ. Բերբերյանը, Ս. Մյասնիկյանը, Խ. Փորքշեյանը և այլք: Կազմակերպվում է երեկույթ, ուր Գր. Չորեքչյանը (հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս) տեղի հայ հանրությանը հորդորում է նպաստել հայ ազգի ակնկալությունների իրագործմանը: Ելույթ են ունենում հանրահայտ պատմաբան և արվեստաբան Ա. Ջիվելեգովը, նշանավոր լեզվաբան Հ. Աճառյանը, իրավաբան Խ. Փորքշեյանը: Հատկանշական է, որ Գր. Չալխուշյանը, խոսելով հայերի համար պատերազմի բախտորոշ նշանակության մասին, քննադատում է տեղի մի քանի «աղաների», որոնք անտարբեր են վերաբերվում հարազատ ժողովրդի ճակատագրին և հիշեցնում է Գամառ Քաթիպայի հայտնի խոսքերը. «Թե որ փողիցդ շահ չունի Հայաստան, թքել եմ քո ալ, փողիդ ալ վրան»:[2]

Պետական Դումայի անդամ, նորնախիջևանցի հասարակական գործիչ Մ. Աճեմյանը, Անդրկովկասից վերադառնալով, զեկուցում է կարդում այդ պատերազմում հայերի համար բացվող հեռանկարների, կամավոր խմբեր կազմակերպելու մասին:[3] Նոր Նախիջևանում կազմակերպվում է կամավորական խմբերի հանդերձավորումը, վարժեցումը և ապա՝ նրանց ճանապարհումը Անդրկովկաս, իսկ այստեղից էլ՝ ռազմաճակատ՝ Արևմտյան Հայաստան: Չալթր գյուղում, օրինակ, կազմակերպվում է հայ-

կական գյուղերի նորակոչ զինվորների ընդունելություն:[4] Նորնախիջևանցի կանայք ստեղծել էին հատուկ կոմիտե՝ տիկին Ե. Բերբերյանի գլխավորությամբ, որը զբաղվում էր կամավորների համար սպիտակեղեն, տաք հագուստ պատրաստելու, ինչպես նաև նրանց սնունդը հոգալու խնդրով:[5]

Նոր Նախիջևանի և Ռոստովի հայկական կոմիտեները կամավորական խմբեր են կազմակերպում և ճանապարհում դեպի Կովկաս: 1914թ. նոյեմբերի 19-ին Սուրբ Լուսավորչի եկեղեցում հոծ բազմության ներկայությամբ տեղի է ունենում պատերազմի դաշտ մեկնող Նախիջևանի և Ռոստովի հայ կամավորների դրոշի օծումը:[6]

Դոնի հայկական գաղութի դերը արևմտահայության ազատագրությանը նպաստելու հարցում միայն այդ փաստերով ու միջոցառումներով չէր սահմանափակվում: Գտնվելով Կովկասը Ռուսաստանի հետ կապող հիմնական ուղու վրա, Նոր Նախիջևանը դարձել էր հայկական տարբեր կենտրոններից կամավորների ընդունման կարևոր մի հանգրվան: Այստեղ էին գաղթավայրերից պարբերաբար ժամանում կամավորական խմբերը, գտնում լավ ընդունելություն, հանդերձավորվում, զինվում և ուղևորվում Անդրկովկաս: Մասնավորապես՝ ռազմաճակատ մեկնելու ճանապարհին այստեղ էին հանգրվանում հայ կամավորական խմբեր Աստրախանից, Մարիուպոլից, Ղրիմից, Խարկովից, Պետերբուրգից, Մոսկվայից, ինչպես նաև հայ կամավորներ՝ Բուլղարիայից, Ռումինիայից, ԱՄՆ-ից:[7]

Ինչպես հայտնի է՝ 1915թ. սկզբներից ընդհանուր կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանից գաղթականների մեծ հոսք սկսվեց նաև՝ դեպի Ռուսաստան: Մասնավորապես՝ 1915թ. սկզբերին Նոր Նախիջևանում հանգրվանում են Մարիղամիշից, Օլթիից, Արդահանից, Արդվինից և այլ բնակավայրերից շուրջ 500 գաղթականներ:[8] Նրանց օգնության գործն իրենց վրա էին վերցրել տեղի հայկական կոմիտեն, եկեղեցական հոգաբարձությունը և բարեգործական այլ հաստատություններ: Հայ գաղթականության, ինչպես և կամավորների օգտին կատարվող հանգանակությունը կազմակերպված ընթացք տալու և հեշտացնելու նպատակով հայկական կոմիտեն քաղաքը բաժանել էր 26 թաղամասերի և յուրաքանչյուր տեղամասում նշանակել պատասխանատու անձ: Նրանց թվում էին այնպիսի հայտնի գործիչներ, ինչպիսիք էին Հր. Աճառյանը, Խ. Փորքշեյանը և այլք:[9] Հիշատակելի է, որ այդ նույն ժամանակ Անդրկովկասում պատսպարված գաղթականության համար Նոր Նախիջևանը 20 հազար ռուբլի գումար և մեծ քանակությամբ հագուստ է ուղարկել:[10]

1915թ. օգոստոսին նորնախիջևանցիք, հայ հասարակության ներկայացուցիչների ժողովում, նկատի առնելով ստեղծված ծանր դրությունը, որոշում են 250 հոգու համար որբանոց բացել:[11] Դոնի հայությունը պարբերաբար վագոններով հացահատիկ և ալյուր էր ուղարկում փախստականներին, որոնք ապաստանել էին Արևելյան Հայաստանում:[12]

Այսպիսով, Հայոց ցեղասպանության դաժան տարիներին Ռուսաստանում ապաստանած գաղթական հայությանն օգնելու հարցում մյուս գաղութների և առհասարակ հայկական շրջանների հետ հայրենասիրական վերաբերմունք դրսևորեց և իր նպաստը բերեց Դոնի հայ համայնքը:

Այս բախտորոշ տարիներին իրենց ձայնն են բարձրացնում շատ անվանի նորնախիջևանցիներ՝ մտավորականներ, հրապարակախոսներ, գրողներ: Նրանց թվում՝ Նոր Նախիջևանի Բարեգործական ընկերության երկարամյա նախագահ, նշանավոր հասարակական գործիչ, իրավաբան

Գրիգոր Չալխուշյանը:[13] Այս հասարակական գործչի մասին հարկ է խոսել ավելի հանգամանալի:

Հայտնի է, որ Նոր Նախիջևանի հայությունը հայ ժողովրդին տվել է հասարակական-քաղաքական և մշակութային երևելի գործիչների մի ամբողջ համաստեղություն: Նրանցից շատերը ճանաչված դեմքեր են եղել ոչ միայն հայ իրականության մեջ, այլև ունեցել են համառուսաստանյան գործունեության շառավիղ ու ճանաչում (Մ. Նալբանդյան, Քերովբե և Ռաֆայել Պատկանյաններ, Մ. Սարյան, Մ. Շահինյան և ուրիշներ): Այդ ականավոր դեմքերի հետ միասին և նրանց կողքին կային նաև ոչ սակավաթիվ այնպիսի գործիչներ, որոնք նման ընդգրկում չունենալով հանդերձ՝ իրենց ողջ տաղանդն ու նվիրումը ծառայեցնում էին Դոնի հայությանը, և այստեղ նրանք, իրավամբ, ճանաչված վաստակաշատ գործիչներ էին համարվում: Հենց նման դեմքերից էր Գրիգոր Չալխուշյանը: Նա 1888 թվականից անընդմեջ եղել է քաղաքային դումայի անդամ, Բարեգործական ընկերության մի շարք հանձնաժողովների նախագահ:

Երբ 1910թ. նշվում էր նրա իրավաբանական և հասարակական գործունեության 25-ամյակը, մամուլում, մասնավորապես «Մշակ», «Լույս» և այլ թերթերում հրապարակված բազմաթիվ հոդվածներում շեշտվում էր Չալխուշյանի հասարակական-մշակութային ազգօգուտ գործունեությունը, այդ ասպարեզում նրա ցուցաբերած հետևողականությունը ու նվիրումը: Մասնավորապես, պետք է նշել նրա բեղում գործունեությունը ռուս հասարակական կարծիքի առաջ հայկական դատը պաշտպանելու արևմտահայերի բազմիցս նյութական օգնություն կազմակերպելու և ազգանվեր այլ պարագաներում:

Գր. Չալխուշյանը հասարակական-քաղաքական հայացքներով հարել է Գր. Արծրունու ուղղությանը և միշտ հավատարիմ մնացել իր համոզմունքներին, դարձել «Մշակ» թերթի մշտական թղթակիցը: Իրավաբանի գործնական աշխատանքին զուգահեռ դեռևս 1880-ական թվականներից նա զբաղվել է նաև պատմահրավական, գրական գործունեությամբ: Նրա գրչին են պատկանում, մասնավորապես "Армянский вопрос в лице Рафаэла Патканяна" (1888), "Армянский вопрос и армянские погромы в России. Панисламизм" (1905), "Восстановление Армении. О так называемых "курдских землях" (1916), "Кери. Венок на могилу героя" (1916), "Армяне и русские самодержцы (К вопросу о турецких армянах)" (1917), "Красная книга" (1919) աշխատությունները: Հայերեն լեզվով 1914թ. լույս էր տեսել մեծ հետաքրքրություն առաջացրած «Մտքեր, խոհեր, դեմքեր» ժողովածուն:

Չալխուշյանի ազգանվեր գործունեության մասին են վկայում նաև նրա նամակները: Այսպես, 1915թ. նոյեմբերի 10-ին Գր. Չալխուշյանը, որը ամեն կերպ աջակցում էր հայկական կամավորական ջոկատների կազմակերպմանն ու սպասարկմանը, գրում է Ռուսաստանի ներքին գործերի նախարար Ա. Խվոստովին. «Ես թույլատվություն եմ ստացել ստորագրելու պետության հաշվին հայ ջոկատայիններին երթևեկության վերաբերյալ հայտերը և միաժամանակ վկայական ունեմ՝ զենք ու մարտական հանդերձանք ձեռք բերելու, որպես ջոկատների «կազմակերպիչ»: Ես շրջագայում եմ քաղաքները, այցելում Մոսկվա, Արմավիր, Եկատերինոդար, Օդեսա, Քիշինև, Յալտա և ամենուրեք բացատրում պատմական մոմենտի նշանակությունը, բոլոր ուժերի լարման անհրաժեշտությունը և սերմանում եմ ատելություն ու զայրույթ գերմանացիների ու թուրքերի դեմ, սեր ու նվիրվա-

ծություն՝ գահի ու Հայրենիքի համար: Ես կազմակերպում եմ նվիրատվությունների հավաք՝ հիվանդանոցներ (լազարեթներ) բացելու և հայ ջոկատայիններին զինելու համար, որոնք ամեն օր անդուլ կերպով գնում են (ես արդեն ճանապարհել եմ երեք հազար հոգի) պայքարելու մեր փառապանծ զինվորականության հետ կողք-կողքի ու փառքով մեռնելու ավերված ու պատվազրկված երկրի հեռավոր դաշտերում»:[14] Եվ ապա՝ բոլոր հայերի անունից նա հայտնում է. «Պետության գործը դարձել է մեր գործը, և չկա զոհաբերություն, որի առաջ մենք կանգ առնենք: Բոլոր տեղերից՝ Ամերիկայից, Ասիայից, Եգիպտոսից, Բուլղարիայից և Ռումինիայից շտապում են հայ ջոկատայինները»: Նա նշում է, որ ինքը հատկապես ոգեշնչված է Նիկոլայ II Թիֆլիսում հայոց կաթողիկոսի ունկնդրության ժամանակ արտասանած «Ես հավատում եմ հայ ժողովրդի նվիրվածությանը, ձեր բոլոր ցանկությունները կկատարվեն», ինչպես նաև Օդեսայում՝ Քիշինևի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Ներսեսի ունկնդրության ժամանակ արտասանած «Հայտնեք հայ ժողովրդին, որ ես հավատացած եմ նրա նվիրվածության մեջ: Վրա կհասնեն լավ օրեր նրա համար» խոսքերով:[15] Հայ հասարակական և ազգային գործիչները, այդ թվում և Գր. Չալխուշյանը, չէին կարող չոգևորվել ռուս միապետի խոսքերով և ընդունում էին այն որպես «աստծո օրհնություն» ու ջանք չէին խնայում ըստ ամենայնի աջակցելու ռուսական կառավարությանը, որը մասնավորապես, արտահայտվեց կամավորական ջոկատների կազմակերպմամբ (ի դեպ՝ իշխանությունների թույլտվությամբ և աջակցությամբ): Փաստորեն՝ Նոր Նախիջևանը դարձավ արևմուտքից եկող հայկական կամավորական գնդերին կենտրոնական հավաքատեղին:

Իհարկե՝ Գր. Չալխուշյանի և մյուս ազգային գործիչների այդ գործունեության լավագույն արդյունքը կլիներ, եթե ցարական կառավարությանն արևմտահայության փրկության հրատապ խնդիրը լուծելու համար՝ Կովկասյան ռազմաճակատում կենտրոնացներ ռուսական բանակ կանչված 250 հազար հայերին, որոնք հերոսաբար կկռվեին իրենց դարավոր թշնամու դեմ և իրենք իսկ կազատագրեին արևմտահայ արյունակիցներին: Ռուսաստանը չգնաց այդ քայլին, որովհետև, ինչպես նշում է Մ. Արզումանյանը. «Հայերը կունենային կենտրոնացված զինվորական ուժ՝ իր որոշակի ռազմական հաղթանակներով, որի հետ հարկ կլիներ հաշվի նստել և «ընդառաջել» հայ ժողովրդի ազգային իղձերի կատարմանը...»:[16] Դրանով հանդերձ «զարիզմը դեմ չէր Արևմտյան Հայաստան մտցնել հայկական ուժ, որպեսզի ամբողջ աշխարհի առաջ հաստատի իր մղած պատերազմի «ժողովրդական-հայրենասիրական բնույթը» և «մարդասիրությունը քրիստոնյա նահատակի» նկատմամբ»:[17]

Իր հայտնի «Կարմիր գրքում» (Դոնի Ռոստով, 1919), ուր հավաքված են տարբեր կարևորագույն նյութեր, Գր. Չալխուշյանը, բազմաթիվ խնդիրներ և հարցեր շոշափելով, անդրադառնում և նաև Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ դաշնակիցների վարած քաղաքականության խնդրին: Մասնավորապես, ըստ Չալխուշյանի. «Թուրքական գազանությունները հանդիսացան ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելու պատճառներից մեկը»[18] և ավելացնում. «Այս պատերազմում Ամերիկայի մասնակցությունը, որն այնքան խոշոր նշանակություն ունեցավ, համենայնդեպս որոշ չափով պետք է բացատրվի հենց հայերի հանդեպ գազանություններով. դա չէր կարող չզայրացնել զգայուն ամերիկացիներին, որոնք

իրենց կոլեջներն ունեն Հայաստանում և մոտիկից ծանոթ են թուրքական բարքերին ու թուրքական կառավարման եղանակներին»:[19]

Գր. Չալխուշյանը ոչ միայն հայկական պրոբլեմների մասին հանդես էր գալիս մամուլում, այլև կրակոտ ելույթներ էր ունենում ազգային հարցերին նվիրված համաժողովներում ոչ միայն Նոր Նախիջևանում և Ռոստովում, այլև Անդրկովկասում, մասնավորապես՝ Թիֆլիսում: Հիշարկելի է նրա 1914թ. մայիսի 4-6-ին հրավիրված 4-րդ ազգային համագումարը, որտեղ դաշնակցական Ազգային բյուրոն դրել էր Արևմտյան Հայաստանի հարցը: Գր. Չալխուշյանն իր ակտիվ մասնակցությունն է բերում Ազգային բյուրոյին, իր իսկ որոշմամբ՝ այդ «փոքրիկ դումայի»[20] աշխատանքներին: Ի դեպ՝ Ազգային բյուրոն այդ համաժողովում Արևմտյան Հայաստանում բանկ հիմնելու նպատակով կազմեց հանձնաժողով, սակայն այս ձեռնարկումն անկատար մնաց...

Ընդհանրացնենք. նորնախիջևանցիները Հայոց ցեղասպանության տարիներին իրենց ուրույն լուման են ներդրել արևմտահայությանը հոգեպես և նյութապես գործնական օգնության ասպարեզում ոչ միայն ի դեմս հայտնի ազգային գործիչների, այլ և ողջ Դոնի հայությանը:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] «Մեր ձայնը» (Նոր Նախիջևան), 1908, N 73:
[2] «Գաղութ» (Նոր Նախիջևան), 1914, NN 32, 36 :
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, 1915, N 8:
[5] Նույն տեղում, 1914, N 39:
[6] Նույն տեղում, 1914, N 35:
[7] Նույն տեղում, 1914, NN 33, 39, 1915, NN 19, 21, 31, 32, 1916, N 1:
[8] Նույն տեղում, 1915, N 12:
[9] Նույն տեղում, N 34:
[10] Նույն տեղում, NN 1, 3, 5:
[11] ՀԿՊԱ, ֆ. 55, գ. 237:
[12] «Գաղութ», 1915, N 129, և այլուր:
[13] Գ. Չալխուշյանի մասին տես՝ Багдасарян Р. Геноцид и армянская интеллигенция России. Ер., 2003, с. 91-176.
[14] ЦГИАМ, ф. ДП, 00, 1915, ед. хр. 14, ч. 20-В, л. 7
[15] Նույն տեղում, թ. 8:
[16] Արզումանյան Մ. Հայաստան, 1914-1917, Եր., 1969, էջ 183:
[17] Նույն տեղում, էջ 183-184:
[18] Чалхушьян Гр. Красная книга. Ростов-на-Дону, 1919, с. 188.
[19] Նույն տեղում:
[20] Նույն տեղում, էջ 46:

Резюме

Геноцид армян и Нор-Нахичеванская армянская колония.

Роберт Багдасарян

Армянская колония на Дону, центром которой был город Нор-Нахичеван (Новая Нахичевань), являлась одной из самых крупных и важных в России. Основанная в 1779г. по указу Екатерины Второй в основ-

ном из крымских переселенцев, община на юге империи сыграла существенную роль в армяно-русских общественно-политических, экономических и культурных связях на протяжении почти двух столетий.

Донские армяне внимательно следили за событиями в Западной Армении, где отрабатывался и был осуществлен в годы Первой мировой войны чудовищный план уничтожения и изгнания армянского народа, уже, впрочем, имевший прецедент – кровавую резню армян в Османской империи в 1894-1896гг.

В 1914-1916гг., когда военные действия развернулись на территории Западной Армении, новонахичеванцы стали во главе движения по организации добровольческих армянских дружин в помощь русской армии, а Нор-Нахичеван превратился в важный центр сбора добровольцев из разных стран, где проживали армяне. Здесь же находили приют и всестороннюю помощь потоки беженцев, хлынувших в Россию из Западной Армении в результате геноцида армян.

Summary

Genocide of the Armenians and
the Armenian Colony of New Nakhichevan.

Robert Baghdasaryan

The Armenian colony on the River Don, the center of which was Nor Nakhichevan (New Nakhichevan), was one of the largest and most important colonies in Russia. Founded in 1779 according to the order of Yekaterina II, mainly by the emigrants from Crimea, the community took great part in the social-political, economic and cultural life of the people in the southern part of Russia.

The Donian Armenians were much interested in the life of their historical homeland which was under the rule of Turkey where the extermination and deportation of the Armenian population was planned and carried out during the First World War. The precedent of the Genocide was the massacre of the Armenians in Ottoman Empire in 1894-1896.

In 1914-1916 when the war was going on in the territory of the Western Armenian the Armenians of New Nakhichevan entered into the volunteer forces to help the Russian Army and the city became the center for the volunteers from different countries. Coming to Russia the streams of deportees found refuge and help in this city.